Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը դասապրոցեսում՝ որպես սովորողի մոտիվացիան բարձրացնելու միջոց»

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցչի օգնական՝ Հասմիկ Գասպարյան

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------3
2. ՏՀՏ-ի կիրառման առավելությունները----------4
3. ՏՀՏ-ի կիրառման հիմնական ուղղությունները----------5
4. Ուսուցչի օգնականի գործառույթները՝ ՏՀՏ կիրառման շրջանակներում---14
5. Եզրակացություն----------15
6. Օգտագործված գրականություն----------17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին ժամանակներս դպրոցների հետ կապված այս հարցը՝ ՏՀՏ-ի օգտագործումը, շատ հաճախ է քննարկման առարկա դառնում: Անընդհատ շեշտվում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը կբարձրացնի ուսումնական պրոցեսի արդյունավետությունը և կխթանի սովորողների մոտ մոտիվացիոն գործընթացները:

Դա, իհարկե, այդպես է. անառարկելի է տեղեկատվական տեխնոլոգիաների դրական դերը

դպրոցում: Միևնույն ժամանակ դա մեզ մոտ նորություն է , հետևաբար ոչ բոլորն են կարողանում լիարժեք ըմբռնել, թե ինչ է պահանջվում իրենցից, թե ինչպես կարելի է ուսումնական պրոցեսը կազմակերպել ՏՀՏ մեթոդների կիրառմամբ: Անդրադառնամ նաև այն պնդմանը, որ ՏՀՏ տեխնոլոգիաների դերը մեծ է հատկապես սովորողների մոտիվացիան բարձրացնելու գործում: Բնականաբար շատ օգտակար ու արդյունավետ կլինի թեմայի ուսումնասիրումը, որովհետև դա կբացի մեծ հնարավորություններ: Եթե հաշվի առնենք, որ այսօրվա դպրոցներում թիվ մեկ խնդիրը սովորողներին մոտիվացնելու խնդիրն է, այս հնարավորությունը կօգտագործվի, որպեսզի ուսումնասիրվի ու պարզաբանվի, թե ինչպես ավելի ճիշտ կլինի օգտվել տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններից, որպեսզի նաև սովորողների մոտիվացիան բարձրանա և աճի նրանց մոտ սովորելու նկատմամբ հետաքրքրությունը:

Հավանաբար շատերին հետաքրքրում է նաև, թե ինչպես կարելի է օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները դասաժամերի ընթացքում, որպեսզի չլինի ժամանակի կորուստ, դասերը անցնեն հետաքրքիր ու հագեցած, ինչպես նաև ավելանա սովորողների հետաքրքրասիրությունը առարկայի նկատմամբ:

Խոսեմ նաև այն մասին, թե ուսուցչի օգնականի աշխատանքը ինչպես է կապված այս թեմայի հետ:

Օգնականը պետք է օգնի ուսուցչին՝ սկսած դասապլանը գրելուց մինչև դասի անցկացման համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստումը: Այսինքն՝ պետք է կարողանա գտնել համապատասխան նյութեր, սահիկաշարեր, կարողանա նաև ինքնուրույն կազմել սահիկաշարեր, որպեսզի անհրաժեշտության դեպքում կազմի ու դասից առաջ բերի դասարան, որպեսզի ուսուցիչը կարողանա ավելի հեշտությամբ ու հետաքրքիր ձևով մատուցել ուսումնասիրվելիք դասանյութը:

Ելնելով վերը հիշատակված պատճառներից՝ անհրաժեշտ ու կարևոր է այս թեմայի ուսումնասիրությունը, և կարծում եմ, որ այն կամբողջացնի տեղեկատվական տեխնոլոգիաների՝ դպրոցում կիրառման վերաբերյալ պատկերացումները:

1.ՏՀՏ-Ի ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏՀՏ գործիքների օգտագործումը հնարավորություն է տալիս խնայել ժամանակը դասարանում, ամրապնդե լճանաչողական գործունեությունը: Սովորողները դառնում են դասի ակտիվ մասնակիցներ, հետևաբար սովորողների մեջ ձևավորվում են հաղորդակցական և տեղեկատվական հմտություններ: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առավելություններից է այն, որ սովորողների մոտ բարձրանում է մոտիվացիան: Սովորողները ավելի մեծ հետաքրքրությամբ են հետևում դասերին, զարգանում է նրանց ստեղծագործական երևակայությունը, լայնանում է մտահորիզոնը, դեպի սովորողները ինֆորմացիայի հոսքը դառնում է մեծածավալ, իսկ այդ հոսքից երեխան հնարավորություն է ունենում ընտրել այն, ինչը իրեն ավելի սրտամոտ է ու հետաքրքիր: Նրանցից յուրաքանչյուրը տեսնում է այն, ինչ կուզենար տեսնել, ու ինչը կար իրականում, բայց դասագրքային նյութը դա տեսնելու հնարավորություն չէր ընձեռում:

Աշակերտները սկսում են ըստ իրենց ճաշակի ու նախասիրությունների կատարել ընտրություն: Ասածս բացատրեմ օրինակով: Վահան Տերյանի կենսագրությունն անցնելիս կարելի է դասարանում ցուցադրել համապատասխան տեսագրություններ, որտեղ վերլուծվում են նրա կյանքի, ստեղծագործական ու քաղաքական գործունեության մանրամասները: Դասագիրքը հնարավորություն է տալիս ծանոթանալ կենսագրական մի քանի մանրամասների, իսկ նրբությունների, մանրուքների մասին լռում է: Իսկ տեսանյութը կարճ ժամանակում հետաքրքիր կերպով ներկայացնում է Տերյանին՝ որպես ժողովրդի սրտացավ

որդի, որպես քաղաքական խելամիտ ու հավասարակշռված գործիչ, որպես պայքարող անհատ, որը կարծես թե ոչ մի ընդհանրություն չունի համրորեն լացող աշնան երգչի հետ: Աշակերտները տեսնում են միանգամայն ուրիշ մի Տերյան, սկսում են հասկանալ, որ իրականում առաջին հերթին Տերյանը պետականություն չունեցող երկրի պետական գործիչ է, նախ ինչպես է ապրում իր ժողովրդի ցավը, իրապես ողբում է իր ժողովրդի վիճակի համար, որովհետև ապրում է այնպիսի օրեր, որ կարող է և իր երկրի վերջին երգիչը լինել: Եվ աշակերտները սկսում են հասկանալ նաև, որ նա ոչ թե հեռվում նստած գեղեցիկ երգեր է հորինել շատ թուլամորթների նման, այլ Ռուսաստանում հեռվից հեռու կռիվ է տվել իր երկրի ու ժողովրդի համար ու իր վերջին ճանապարհորդությունն էլ կատարել է պետական կարևոր հանձնարարություն կատարելու նպատակով: Նույնիսկ մահացու հիվանդությունը նրան հետ չի պահել այդ տանջալի ճանապարհորդությունից, որովհետև նա դա անում էր իր երկրի ու ժողովրդի համար: Իսկ բանաստեղծությունները՝ բանաստեղծությունները նրա ցաված սրտի արցունքներն են, որ խտացել են, բյուրեղացելու մեր ժողովրդի ու մեր

գրականության համար իսկապես էլ ադամանդի արժեք ունեն (ես նկատի ունեմ «Ազատություն» ռադիոկայանի պատրաստած «Վերջին ուղևորությունը» փաստագրական ֆիլմը, որը անցած տարի ցուցադրեցինք մեր դասարաններից մեկում դասի ժամանակ):

Տեսանյութի դիտումից հետո փոխվեց մեր աշակերտների կարծիքը Տերյանի նկատմամբ, նույնիսկ նրա բանաստեղծությունները սկսեցին այլ կերպը նկալել, սիրել, հավանել:

Դարձյալ անդրադառնամ տեղեկատվական տեխնոլոգիաների դերին ու ավելացնեմ նաև, որ ոչ մի դասագիրք ու ցուցապաստառ չէր կարող ապահովել այն դրական ազդեցությունը, որը թողեց այս տեսանյութը:

2. ՏՀՏ-Ի ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից դպրոցում շատերը, ՏՀՏ-ի կիրառում ասելով, հասկանում են միայն սահիկաշարերի ցուցադրումները, բայց ավելի մեծ ուշադրությամբ ուսումնասիրելիս հասկանալի է դառնում, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը միայն այդքանով չի սահմանափակվում:

Փաստ է և այն, որ շատ դպրոցներ հնարավորությունների առումով զիջում են մայրաքաղաքային առաջնակարգ դպրոցներին, չունեն անհրաժեշտ սարքավորումների բազան, որ կարողանան լիովին օգտվել և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դարձնել սովորական աշխատանքի ձև: Սակայն անժխտելի է և այն, որ ուսուցիչների համար էլ շատ հեշտ կլինի ՏՏ միջոցների կիրառմամբ դասը վարելը, որովհետև այդպիսի դասերը ավելի հետաքրքիր են, դասավանդվող առարկան՝ ավելի սպասված ու հաճելի, դասապրոցեսը՝ աշխույժ, հագեցած, շատ ավելի օգտակար, որովհետև երեխաները ավելի լավ են հիշում այն նյութը , որը սովորում են հաճույքով:

Ժամանակակիցհամակարգիչներըունենշատմեծհնարավորություններ,որոնքթույլեն տալիսուսուցմանպրոցեսումինտեգրելտեքստեր, գրաֆիկա, ձայն, անիմացիա, տեսահոլովակներ, բարձր որակ լուսանկարներ, լայն էկրան տեսանյութի բավականին մեծ ծավալներ:

Դասի ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությունները ստորև ներկայացնենք կետերով.

2.1. Նոր նյութ ներկայացնելիս գիտելիքների վիզուալիզացիա:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարդիկ կարողանում են մտապահել իրենց լսածի ընդամենը հինգ տոկոսը, իսկ տեսածի՝ քսան տոկոսը: Եթե ուսուցիչը աշխատում է ձայնային և տեսողական տեղեկատվության միաժամանակյա օգտագործմամբ,նա կարող է հասնել մինչև քառասունից

հիսուն տոկոս արդյունքի: Սակայն պետք է խոստովանենք, որ ուսուցման ավանդական մեթոդները հնարավորություն են տալիս աշխատել սովորողների հիմնականում մեկ՝ լսողական զգայարանի հետ, այսինքն՝ ուսուցիչը պատմում է, սովորողները՝ լսում և ընկալում: Ամենաշատը, որ կարելի է անել, գրատախտակի վրա անհրաժեշտ մաքսիմումը գրելն է, մեկ կամ մի քանի պաստառ ցուցադրելը: Ուսուցիչը կամ ուսուցչի օգնականը սրանից ավելին անել չեն կարող: Իսկ այսքանը դեռ չի նշանակում, թե ուսուցման վիզուալ մեթոդը կիրառվել է իր ամբողջ հնարավորությունների ծավալով:

Գալով տեղեկատվական տեխնոլոգիաներին՝ պետք է ասենք, որ դրանք գերազանց հնարավորություններ են ընձեռում ուսուցման վիզուալ մեթոդի կիրառման համար: Ուսուցչի օգնականը կարող է նախօրոք իմանալ դասի թեման, պատրաստել սահիկաշար, շարժանկար, տարբեր օժանդակ ցուցապաստառներ, որոնք կցուցադրվեն դասի ընթացքում: Առանձին պատկերներ կարելի է ավելի երկար ժամանակով թողնել էկրանին, եթե դասապրոցեսը այդ հնարավորությունը տալիս է: Այս ամենը կօգնի, որ ուսումնառության պրոցեսում սովորողները ավելի զգալի հաջողություններ արձանագրեն:

Գալով մոտիվացիայի բարձրացման խնդիրներին՝ դարձյալ պետք է փաստենք, որ ստեղծագործական երևակայություն չունեցող աշակերտների համար շատ դժվար է լսել ուսուցչի պատմածը, ընկալել ճշգրտությամբ և մտապահել: Մինչդեռ բոլորովին այլ բան է, երբ այն ամենը, ինչի մասին խոսվում է, ներկայացվում է առանձին պատկերների տեսքով:

Նման արդյունք է ստացվում նաև դասարանում շարժանկարների դիտման դեպքում: Կան շատ ուսանելի ֆիլմեր, որոնցից կարելի է հատվածներ ցուցադրել տարբեր առարկաների դասաժամերի ընթացքում: Օրինակ գրականության ժամերին կարելի է ցուցադրել գրողների կյանքին վերաբերող որոշակի հատվածներ տարբեր գեղարվեստական ու վավերագրական ֆիլմերից, որտեղ շեշտադրվում են տվյալ գրողի որոշակի գործունեության մանրամասները, որոնք ավելի հասկանալի են դարձնում գրողի ապրած ժամանակաշրջանը ու օգնում հասկանալ այս կամ այն ստեղծագործության ստեղծման շարժառիթներն ու դրդապատճառները: Սա կարող է հիանալի մոտիվացիոն խթան հանդիսանալ աշակերտների համար: Նրանց մոտ սովորաբար նման դեպքերում հետաքրքրասիրություն է արթնանում, ցանկանում են դիտել շարժանկարն ամբողջությամբ, իմանալ ավելին, իսկ ուսուցիչն ու օգնականը արդեն կարող են իրենց նպատակը իրականացած համարել:

Ավելացնենք և այն, որ գրականության դասերի ընթացքում կարելի է նաև լսել երաժշտություն, եթե թեման ընձեռում է այդպիսի հնարավորություն: Հատկապես

բանաստեղծություններ անցնելիս ճիշտ կլինի լսել այդ բանաստեղծությունների խոսքերի հիման վրա ստեղծված երգերը: Շատ աշակերտների կարող է սկզբում զարմանալի ու ոչ բնական թվալ այն, որ իրենք դասաժամը «վատնում են» երաժշտություն լսելու վրա: Սա ևս իմ փորձով եմ նկատել: Բայց փորձված ուսուցչի համար անմիջապես նկատելի է, թե ինչպիսի դրական ազդեցություն է ունենում աշակերտների վրա երաժշտությունը:

Քանի որ խոսք բացվեց երաժշտության վերաբերյալ, անդրադառնանք մի խնդրի ևս. Խոսքը վերաբերվում է նրան, որ մեր երեխաները միանգամայն զուրկ են երաժշտական ճաշակից: Նրանք գրեթե երբեք չեն լսում որակյալ երաժշտություն ու ցավալին այն է, որ դրա կարիքը չեն էլ զգում: Նրանց երաժշտական ճաշակը դեռևս փոքր տարիքից ձևավորվում է ոչ ճիշտ: Այդ պատճառով գտնում եմ, որ գրականության ուսուցիչը մշտապես պետք է հոգ տանի, որ որակյալ երաժշտության գոնե նմուշներ հասանելի լինեն երեխաներին: Դասարանում մենք մի քանի նման փորձեր արելենք: Աշակերտների համար շատ անսովոր էր, օրինակ «Ձոն» բանաստեղծության խոսքերով գրված երգը, Մեծարենցի «Սիրերգ», «Երազ օրեր» բանաստեղծությունների խոսքերով գրված երգերը: Նրանց համար այդպիսի երաժշտությունները ծիծաղելու աստիճանի տարօրինակ էին, սակայն նրանք սիրով լսեցին մինչև վերջ: Հաջորդ օրը մեծ մասը տանը փորձել էր երգել սովորել: Դասարանում խմբակային ձևով երգեցին, հիացրին մեզ, և իրենք էլ հաճույք ստացան իրենց երգից: Հետագայում դասաժամերին փոքր-ինչ լիցքաթափվելու նպատակով հաճախակի էինք կազմակերպում փոքրիկ երաժշտական դադարներ ու դարձյալ վայելում ամբողջ դասարանի կողմից կատարվող մեր գեղեցիկ երգերը: Սա, հասկանալի է, թե ինչպիսի մոտիվացիոն ազդակ է: Կուզենայի խոսել նաև Շնորհալու «Առավոտ լուսո» շարականի մասին: Շատ ուսուցիչներ գուցե և վախենան կամ խուսափեն դասարանում շարականը լսելուց, որովհետև կմտածեն, որ երեխաները չեն հասկանա, բայց մենք դասարանում դա ևս լսեցինք, ու մինչև հիմա ես այնքան տպավորված եմ երեխաների դրական արձագանքից, որ որոշեցի անպատճառ այդ մասին ասել: Երբ մենք որոշեցինք ընդհատել շարականի ունկնդրումը ու շարունակել դասը, նրանք բողոքեցին, որովհետև իսկապես շարականը նրանց հոգու խորքերն էր հասել: Եվ խոստավանենք, որ առանց տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման անհնարին կլիներ այս ամենը կազմակերպելը:

Մինչև այժմ մենք խոսելենք միայն նորություի մատուցման ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունից, սակայն պետք է ասենք նաև այն, որ դասի այլ փուլերում և այլ նպատակներով և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը անհրաժեշտ է

մոտիվացոն և այլնպատակներով: Դասիկշռադատմանփուլումնույնպեսհնարավոր է դիմելտեղեկատվականտեխնոլոգիաներիօգնությանը և ստանալցանկալիարդյունքներ:

Ժամանակակիցտեխնիկականհնարավորություններըբավականինբազմազանենուխ ոստումնալից, որպեսզի ուսուցիչները կարողանան անձամբ ստեղծել խաղ-մրցույթների սահիկաշարեր: Կան համապատասխան ծրագրեր, որոնցով կարելի է կազմել չորս տարբերակներով հարցաշարեր և դասարանում անցկացնել մրցույթանման խաղեր: Այդպիսի խաղերը ևս երեխաներին շատ են գրավում, նրանք սովորում են իրենց համար էլ աննկատելի կերպով: Եթե սովորական դասի ժամանակ, օրինակ, աշակերտին հետաքրքիր չէ որևէ հարցի պատասխանը, ապա էլեկտրոնային գրատախտակի դեպքում նա հաստատ կուզենա պատասխանը իմանալ, տեղադրել, որ անցնի հաջորդ փուլ, ինչպես անում է համակարգչային խաղեր խաղալու դեպքում: Տարբերությունը այստեղ այն է, որ համակարգչային խաղերից հիմնականում նոր բան չեն սովորում, իսկ այստեղ «խաղի» բնույթը ստիպում է դասանյութի իմացություն դրսևորել և ամրապնդել գիտելիքները:

Բացի խաղ-մրցույթներից՝ հնարավոր է կազմակերպել նաև համապատասխանեցման վարժություններ: Օրինակ՝ համապատասխանեցնել հասկացության անվանումը նկարին: Սա կարելի է կազմակերպել լեզուների դասաժամերին: Հայոց լեզվի դեպքում, բնականաբար, պետք է ընտրել նոր սովորած քիչ հանդիպող բառերը, օրինակ՝ նորաբանությունները, որպեսզի առաջադրանքը չափազանց պարզունակ չթվա, որովհետև պարզունակ առաջադրանքը նույնպես հոգնեցնում, ձանձրացնում և հակառակ արդյունքն է տալիս, ինչպես չափազանց բարդ առաջադրանքը: Նշեմ նաև այն, որ պարտադիր չէ ամբողջ աշխատանքը իրականացնել տեխնոլոգիաների կիրառմամբ: Կարելի է , օրինակ, վարվել այսպես. Առաջադրանքը ցուցադրվում է էկրանին, իսկ աշակերտները դրա վերաբերյալ գրառումները անում են իրենց տետրերում:

Հետաքրքիր, զարգացնող ու մոտիվացնող աշխատանքներ են նաև նկարի շուրջ շարադրությունները: Դրանք զարգացնում են բազմաթիվ հատկանիշներ՝ սկսած գեղագիտական ճաշակից մինչև ստեղծագործական ունակություններ: Մենք առաջադրանքը կազմակերպել ենք հետևյալ կերպ. Էկրանին դրվում են աշխարհահռչակ նկարիչների հայտնի կտավներից չորսը միաժամանակ: Աշակերտները խմբավորվում են՝ ըստ նկարի ընտրության: Ամբողջ խմբով ստեղծում են նկարի վերաբերյալ մեկ շարադրություն, կարդում են, գնահատվում մյուս խմբերի կողմից «Երկու աստղիկ, մեկ ցանկություն» մեթոդի կիրառմամբ (յուրաքանչյուր խմբից մեկական ներկայացուցիչ ներկայացնում է շարադրանքի

երկու ամենալավ մտքերը և շարադրանքի բովանդակության հետ կապված իրենց խմբի անդամների մեկ ցանկություն-լրացումը):
Բնական է, որ անհնարին է թվարկել այն բոլոր հնարավորությունները, որ կարող են ընձեռել տեղեկատվական տեխնոլոգիաները դասաժամի նկատմամբ սովորողների հետաքրքրությունը և ներգրավվածությունը ապահովելու համար: Աշխատանքի ընթացքում ուսուցչի ստեղծագործական երևակայությունը նրան կհուշի, թե ինչ կարելի է անել՝ դասը հետաքրքիր դարձնելու համար, իսկ սովորողները իրենք էլ կարող են հուշել ու նոր մտքեր տալ:

2.2.Ինֆորմատիկայի դասաժամերին՝ լաբորատոր աշխատանքների կատարում: Այստեղ տեղին է հիշել չինական հայտնի ասացվածքը. «Ասա՛ ինձ, և ես կմոռանամ, ցու՛յց տուր , և ես կհիշեմ, մասնակի՛ց դարձրու, և ես կսովորեմ»: Ինֆորմատիկայի դասաժամերը այժմ դպրոցներում անհրաժեշտություն են: Այդ դասաժամերի ընթացքում աշակերտները ստանում են տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված մանրամասն ինֆորմացիա: Բնական է, որ այդ ինֆորմացիան լիարժեք չի լինի, չի ապահովվի տվյալ ինֆորմացիայի վերաբերյալ գիտելիքների ամբողջական յուրացումն ու հմտությունների ձեռքբերումը, եթե ստացած գիտելիքների վերաբերյալ չկազմակերպվեն գործնական աշխատանքներ ու սովորողին համակարգիչների օգնությամբ չհմտացնեն այն ամենի մեջ, ինչը անցնում են որպես դասագրքային տեսական նյութ:

2.3.Նախագծային աշխատանքների համար համացանցից նյութերի հավաքում, համակարգում, ներկայացում՝ նախագծի տեսքով: Սույն հետազոտական աշխատանքը նպատակ ունի ներկայացնել, թե տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը դասապրոցեսում ինչպես կարող է բարձրացնել սովորողի մոտիվացիան: Պետք է նկատի ունենալ, որ խոսքը դասապրոցեսի մասին է: Նկատենք ևս մեկ կարևոր բան՝ դասապրոցես ասվածը չի վերաբերվում միայն դասաժամերին: Նախագծային աշխատանքները, որոնք մեր դպրոցներում նորույթ են, նույնպես դասապրոցես են ենթադրում, միայն թե ոչ ավանդական: Նախագծային աշխատանքի համար առանձին դասաժամեր չեն հատկացվում, սակայն դա ևս մի ուրույն դասապրոցես է, որի ժամանակ ուսուցիչը աշխատելու է աշակերտների հետ, ուղղորդելու է նրանց, տալու է ցուցումներ աշխատանքի կատարման վերաբերյալ: Այնպեսոր «դասապրոցես» ասելով՝ մենք նկատի կունենանք նաև նախագծային աշխատանքի պրոցեսը ևս կուսումնասիրենք ու կմանրամասնենք այն աշխատանքները, որոնք պետք է կատարել նախագծային աշխատանք ղեկավարելիս: Այստեղ նախ ընտրվում և հաստատվում է թեման, ապա՝ այն աշակերտների անունները, ովքեր ցանկություն են հայտնել մասանակցել աշխատանքին: Ուսուցիչը առաջադրանքներ է տալիս, ուղղորդում է,

իսկ նյութը համացանցից ու այլ աղբյուրներից գտնում, մշակում ու ներկայացնում են աշակերտները՝ բնականաբար դարձյալ ուսուցչի հսկողությամբ:

2.4.Տարբեր տնային հանձնարարություններ՝ համացանցից նյութերի հայթայթման, համակարգված ձևով ներկայացնելու հետ կապված: Տնային աշխատանքների հանձնարարման գործում նույնպես անժխտելի է տեղեկատվական տեխնոլոգիաների բարերար ազդեցությունը: Պատճառը հավանաբար երեխաների հետաքրքրասիրությունն է տեղեկատվական տեխնոլոգիաների նկատմամբ, իսկ եթե հմուտ մանկավարժը կարողանում է ճիշտ օգտագործել այդ հետաքրքրասիրությունը ու այն վերածելով նպատակների՝ ապահովել ցանկալի վերջնարդյունքներ, կրթության որակը միայն շահում է: Աշակերտներին կարելի է հանձնարարել տարբեր տեսակի տնային աշխատանքներ տարբեր առարկաների դասաժամերի շրջանակներում: Գաղտնիք չէ, որ համացանցը ցանկացած նյութի վերաբերյալ պարունակում է տարատեսակ ինֆորմացիա: Մանկավարժները մշտապես պետք է ուշադիր լինեն նախ այն հարցում, որ զարգանան սովորողների թվային և մեդիակարողունակությունները, դա ևս կարելի է կազմակերպել համացանցի միջոցով տեղեկություններ հավաքելու և դասարանում դրանք ներկայացնելու և քննարկելու միջոցով: Ավելի պարզ ասած՝ պետք է ուշադիր լինել, որ սովորողը թվային և մեդիատիրույթում լինի կարողունակ, սովորի գտնել իրեն պետք եղած ինֆորմացիան, բայց և կարողանա տարբերել կեղծ ու սխալ ինֆորմացիան իրականից: Իսկ եթե այդ կարողունակության զարգացման հետ միաժամանակ համացանցից նյութեր որոնելն ու գտնելը և դրանց հետ աշխատելը (խոսքը հեղինակային գրքույկներ, բառագրքեր, տարբեր թեմաներով սահիկներ ստեղծելու մասին է) դառնում է նաև մոտիվացիոն խթան, արդեն խոսում է ուսուցչի բարձր վարպետության մասին: Մի քանի օրինակներով ներկայացնենք, թե ինչպիսի տնային աշխատանքներ կարելի է հանձնարարել SS ներգրավմամբ: Կարելի է հանձնարարել որոշակի թեմաների մասին լրացուցիչ նյութեր գտնել, ստեղծել բացիկներ, գրքույկներ, պատրաստել որոշակի երկրաչափական ֆիգուրներ, կատարել թարգմանություններ, գտնել բառերի իմաստները և այլն:

2.5. ՏՀՏ օգտագործումը՝ որպես հսկողության ստուգման ձև: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը՝ որպես գիտելիքների ստուգման ձև, շատ հարմար է ուսուցիչների համար, որովհետև համակարգը ծրագրավորված է այնպես, որ հարցին պատասխանելուց անմիջապես հետո էկրանին երևում է արդյունքը: Այս համակարգը դեռևս դպրոցներում լայն կիրառություն չի գտել: Բնականաբար դրա համար անհրաժեշտ են նյութական միջոցներ, այլ ռեսուրսներ, ինչը, կարծում եմ, մոտ ապագայում անհասանելի է լինելու: Սակայն,

չնայած դրան, ես կուզենայի խոսել նաև այդ մասին, ուսումնասիրել դրա վերաբերյալ եղած նյութերը և հասկանալ ու ներկայացնել, թե ինչ է դա, ճշտել դրա դրական ու բացասական կողմերը: Ներկայումս Հայաստանում կան մի քանի բուհեր, որտեղ գործում է տեղեկատվական տեխնոլոգիաները որպես գիտելիքների ստուգման ձև օգտագործելու սկզբունքը: Քանի որ մեզ հատկապես հետաքրքրում է, թե տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով գիտելիքների ստուգումը որքանով է ազդում սովորողների մոտիվացիան բարձրացնելու վրա, ապա մենք հարցին կնայենք ավելի շատ այս տեսանկյունից: Ես ճիշտ եմ համարել ոչ թե համացանցից կամ այլ գրավոր աղբյուրներից տեղեկույթ քաղել խնդրո առարկայի վերաբերյալ, այլ հարցում անցկացնել նման բուհերից մեկի մի քանի ուսանողների հետ: Հարցումները ցույց են տալիս, որ այս մեթոդը շատ արդյունավետ է մի քանի տեսանկյուններից:

1.Դասախոսները իրենք չեն ընդունում քննությունը, անձամբ չեն գնահատում ուսանողներին, բայց պատասխանատու են արդյունքների համար:

2.Բացառվում է մարդկային գործոնը, այսինքն ուսանողները համոզված են, որ կողմնապահություն չի լինելու, որևէ մեկին առավելություն չի տրվելու, և ստանալու են այն գնահատականը, ինչին իսկապես արժանի են:

3.Բացառվում է լրացուցիչ լարվածությունը, որովհետև ամեն պատասխանից հետո սովորողները տեսնում են իրենց միավորը:

Այս ամենը նպաստում է, որ գնահատումը դառնա թափանցիկ, ուսման որակը բարձրանա, ստուգման ձևերը դառնան ավելի ժամանակակից ու սովորողները նույնիսկ քննություններին մասնակցեն ավելի մեծ հետաքրքրությամբ ու հաճույքով, որովհետև դա նմանվում է խաղի, որտեղ հաղթահարում են ու անցնում առաջ նրանք, ովքեր տարվա ընթացքում սովորել ու հավաքել են գիտելիքների անհրաժեշտ պաշար: Համոզվելու համար, որ ամեն ինչ կարգին է, ու գիտելիքների ստուգման այս ձևը արդիական լինելուց բացի նաև մոտիվացիա է ապահովում, հարցրել եմ ուսանողների կարծիքները՝ որպես պրոցեսի ակտիվ ու բազմափորձ մասնակիցների: Պատասխանները միանշանակ դրական էին: Մնում է սպասել դրական փոփոխությունների, ինչը, կարծումեմ, նաև ժամանակի խնդիր է:

Որպես միավորային գնահատման ձև գոյություն ունի նաև Quizizz առցանց գործիքը օգտագործելու տարբերակը: Դրա միջոցով հնարավոր է իրականացնել սովորողների համաժամանակյա առցանց գնահատում: Այս մասին անհրաժեշտ ինֆորմացիա կարելի է գտնել «Ուսուցման արդյունավետ հնարներ» գրքում: Կարծում եմ, որ սա հետաքրքիր մոտիվացիոն տարբերակ է, բայց դեռևս կիրառություն չի գտել դպրոցներում, իսկ դրա նպատակահարմարությունը դեռ պետք է ստուգվի:

2.6. Սովորողների՝ հատուկ կարողությունների վերհանում (ուշադրություն, մտածողություն, հիշողություն): Այժմ բազմաթիվ թեստեր կան մշակված, որոնց միջոցով հնարավոր է վեր հանել սովորողների հատուկ կարողությունները՝ ուշադրությունը, հիշողությունը, մտածողության առանձնահատկությունները: Այսպիսի թեստերը, իհարկե, սովորողների իմացածին որևէ բան դժվար թե ավելացնեն, բացի այդ դասապրոցեսի ընթացքում դրանց կիրառումը նպատակահարմար չէ, բայց հնարավոր է այդպիսի թեստերը կիրառել դասղեկական ժամերի ընթացքում՝ սովորողների մոտ հետաքրքրասիրություն առաջացնելու նպատակով, ինչպես նաև նրանց ավելի լավ ճանաչելու և հետագայում նրանց ուժեղ կողմերի վրա հենվելով՝ ուսուցումը ճիշտ կազմակերպելու նպատակով:

2.7.Հեռավար ուսուցում: Հեռավար ուսուցման վերաբերյալ գրեթե բոլոր մանկավարժները գաղափար կազմեցին կորոնովիրուսի հետևանքով դպրոցների հարկադիր փակելուց հետո: Այդ ժամանակ, ինչպես գիտենք, տարերայնորեն ինքնակազմակերպվեցին գրեթե բոլոր ուսումնական հաստատությունները ու անցկացրին հեռավար ուսուցում: Բայց, հասկանալի է, որ հեռավար ուսուցումը ունի իր օրենքներն ու կանոնները: Կան հարթակներ (օրինակ՝ զում-ը), որոնք առավել հարմար են այդ առումով: «Իմ դպրոցը» կրթական կայքը ևս հնարավորություն է ընձեռում օնլայն աշխատանքի համար: Հիմնականում այստեղ կիրառվում է թեստերի միջոցով գիտելիքների ստուգման մեխանիզմը: «Իմ դպրոց» կայքի թեստերը բավականին լավ են կազմված և գիտելիքների ստուգման առումով լավմշակված մեխանիզմներ ունեն: Սակայն պետք է ասել, որ հեռավար ուսուցման վերաբերյալ միասնական մոտեցում դեռևս չկա: Հավանաբար պատճառը այն է, որ ստացիոնար ուսուցման հայտնի ձևը շատ ու շատ դրական կողմեր ունի, ամենից առաջ՝ մարդկային հասարակ շփումը դեպի ապամարդկայնացման գնացող այս աշխարհում, այդ իսկ պատճառով դեռևս հեռավար ուսուցման համընդհանուր գործուն մեխանիզմներ դեռևս չկան կամ չեն կիրառվում: Խոսելով մոտիվացիայի մասին՝ նշենք, որ հեռավար ուսուցման ժամանակ մի քանի ՝ նախկինում ոչ շատ ակտիվ աշակերտներ սկսեցին ակտիվություն ցուցաբերել, հանդես գալ, հավանաբար պատճառը այն էր, որ հարազատ տանից խոսելը նրանց վստահություններ շնչում:

2.8.Էլեկտրոնային մատյանի վարում, տվյալների հասանելիություն աշակերտներին և ծնողներին: Էլեկտրոնային մատյանի վարումը ևս կարելի է ներառել դասապրոցեսի մեջ՝ անկախ այն բանից, որ էլեկտրոնային մատյանը լրացվում է ամենևին էլ ոչ դասաժամի ընթացքում: Էլեկտրոնային մատյանը դասապրոցեսի խթանման համար բավականին կարևոր գործիք է: Որքան նկատում

եմ՝ առաջադեմ ուսուցիչները աշխատում են դասը կազմակերպել այնքան հետաքրքիր, որ աշակերտների համար գնահատականը մղվում է երկրորդ պլան: Ժամանակակից դպրոցում արդեն այնքան էլ հեշտ չէ աշակերտներին մոտիվացնել գնահատականով: Նրանց ավելի ճիշտ կլինի սովորեցնել, որ կարևորը ոչ թե գնահատականն է, այլ գիտելիքների, հմտությունների, արժեքային համակարգի ու սեփական դիրքորոշումն ունենալու կարողունակություններ ձեռք բերելը: Նույնը ծնողական ժողովների ժամանակ հիշեցվում է ծնողներին: Նրանք ևս պետք է հասկանան, որ իրենց երեխան այնպիսի մեծ արժեք է, որ գնահատականը չի կարող այդ արժեքը չափել, չպիտի երեխային հարցնել, թե ինչ գնահատական է ստացել, պետք է հարցնել, թե ինչ է սովորել այդ օրը դպրոցում, և այդ ժամանակ երեխան բազմաթիվ պատասխաններ կունենա տալու ու չի նվաստանա, որ ուրիշը ստացել է ինը, իսկ իր հիշողությունը մի քիչ թույլ է, կամ մի հարցի պատասխանը չհիշեց այդ պահին: Չնայած բոլոր ասվածներին, գալիս է պահ, որ պետք է իրականացվի միավորային գնահատում: Եվ, իհարկե, ծնողներին հետաքրքրում է, թե իրենց երեխան ինչպես է պատասխանում դասը, ինչ գնահատականներ է ստանում, որովհետև շատ հաճախ նա այդ գնահատականներից հետևություններ է անում իր երեխայի ուսմանվերաբերյալ և երբեմն կարողանում է նկատել ու լուծել ծագած հարցերը: Օրինակ, եթե երեխայի առաջադիմությունը կտրուկ նվազել է, դա կարող է խոսել վերջինիս մոտ ինչ-ինչ խնդիրների ի հայտ գալու մասին: Դա կարող է լինել առողջական, անձնական, հուզական խնդիր, ինչը պետք է հայտնաբերել ու կառավարել: Բացի այդ՝ գնահատականը, մանավանդ, եթե այն հասնում է ծնողներին՝ նույնիսկ նախքան երեխայի տուն հասնելը, կարող է մոտիվացիոն գործոն հանդիսանալ՝ դասապրոցեսին ավելի ակտիվ հանդես գալուն նպաստելու համար: Միաժամանակ, երբ գնահատականները աշակերտներին ու նրանց ծնողներին էին հասնում «Դասարան» կայքի միջոցով, հետաքրքիր մեթոդ էր մշակվել՝ երեխաները գնահատականների դիմաց ստանում էին համապատասխան քանակությամբ «նուռիկներ»: Հատկապես կրտսեր ու միջին դպրոցում դա շատ ոգևորիչ էր երեխաների համար, ցանկալի կլիներ, եթե նույնը արվեր հիմա՝ մոտիվացիոն գործոնը խթանելու նպատակով (իհարկե, չենք մոռանում, որ նոր չափորոշչով տարրական դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի նախատեսվում, բայց կարծումեմ, որ հնարավոր է ինչ-որ հետաքրքիր բան մտածել):

Այսպիսով՝ թվարկեցինք այն բոլոր ուղղությունները, որոնց հետ կապված կարելի է զարգացնել ուսուցման պրոցեսը՝ սովորողների մոտիվացիոն որակները բարձրացնելու նպատակով:

ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ՏՀՏ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ուսուցչի օգնականը պետք է իրականացնի հետևյալ քայլերը:

1.Նա պետք է տիրապետի հիմնական էլեկտրոնային ձեռնարկներին՝ հիմնված առարկայի առանձնահատկությունների վրա:

2.Պետք է կարողանա օգտագործվող համակարգչի վրա տեղադրել անհրաժեշտ ծրագրեր, նաև պետք է կարողանա համակարգչից, համացանցից գտնել ու օգտագործել դիդակտիկ էլեկտրոնային նյութեր, կարողանա աշխատանքում ակտիվորեն օգտագործել պրոեկցիոն տեխնոլոգիաները, կարողանա ինքնուրույն սահիկաշարեր կազմել՝ դպրոցական նյութին համապատասխան:

3.Պետք է ունենա աշակերտներին իրենց համար ավելի հարմար և հասկանալի նյութերով ապահովելու համար համապատասխան ծրագրակազմ օգտագործելու և ընտրելու կարողություն:

4.Պետք է օժտված լինի աշակերտների, ծնողների, ուսուցիչների հետ աշխատելու, նրանց անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն փոխանցելու, ինչպես նաև այդ փոխանցման ձևը որոշելու ունակությամբ (էլփոստ, կայք, բլոգներ, սոցիալական ցանցեր) :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հասարակությունը արդեն չի կարող պատկերացնել իր կյանքը՝ առանց տեղեկատվական տեխնոլոգիաների: Ներկայումս երկու-երեք տարեկանից սկսած՝ երեխաները արդեն ծանոթանում են սմարթ-հեռախոսին, կատարում դրա հետ կապված պարզ գործողություններ, շատ հաճախ ծնողները իրենք են տալիս դա նրանց ՝ որպես զբաղմունքի և իրենց չխանգարելու միջոց, իսկ հետո կամաց-կամաց դադառնում է երեխաների համար կենսակերպ՝ յուրատեսակ կախվածության մեջ պահելով նրանց: Ավելի մեծ տարիքում արդեն համացանցից օգտվելը դառնում է օրվա հրանայականը՝ որպես թե՛ շփմանմիջոց, թե՛ տեղեկատվության աղբյուր, թե՛ գիտական ինֆորմացիայի ստացման եղանակ, թե՛ գեղագիտական պահանջմունքները բավարարելու միջոց (երաժշտություն, ֆիլմեր, նկարներ):Մի խոսքով՝ երեխաները արդեն իսկ համացանցից գաղափար ունեն, օգտվում են, իսկ ուսուցիչները համապատասխանաբար պետք է ստանձնեն խնդրո առարկայի հետ կապված իրենց սեփական դերը: Բաննայն է, որ աշակերտների այդ ցանկությունը՝ համացանցից օգտվելու, կկայանա տարերայնորեն, ինքնաբուխ, շատ դեպքերում նրանց կտանի սխալ ճանապարհով: Շատ կան աշակերտներ, ովքեր ամբողջ օրը կարող են զբաղվել միայն համակարգչային խաղերով, ինչը նրանց օգտակար ոչինչ չի տալու: Ըստ էության՝ նաև երեխաների ՝ համացանցից օգտվելու պահանջի հիման վրա են կառուցվում ուսուցման պրոցեսի այն մեթոդներն ու եղանակները, որոնց հիմքում ընկած է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը: Բոլորս էլ նկատած կլինենք, որ երեխաները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում համակարգչի ու այն ամենի նկատմամբ, ինչը կապված է համակարգչով աշխատանք կատարելու հետ: Այս ամենը հաշվի առնելով՝ ուսումնասիրվել է այս թեման՝ հստակ մտադրությամբ՝ գտնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետ մեթոդներ ու եղանակներ, որոնց շնորհիվ կբարձրանա սովորողների մոտիվացիան: Այս հետազոտական աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքում պատասխան է տրվում այն հարցին, թե ինչ առավելություններ կարելի է նկատել ու ակնկալել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունքում, ուսուցման պրոցեսում ինչ հիմնական ուղղություններով են կիրառվում տեղեկատվական տեխնոլոգիաները: Մի փոքր խոսվել է այն մասին, թե որն է ուսուցչի օգնականի դերը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասապրոցեսի իրականացման գործում: Աշխատանքի արդյունքում կատարված եզրակացությունը մեկն է. Որքան էլ խոսենք

տեղեկատվական տեխնոլոգիաների վնասներ իմասին, միևնույն է, չենք կարող խուսափել դրանցից, որովհետև դրանք գնալով արմատանում են մեր կենցաղում, իսկ դպրոցը պարտավոր է ժամանակից հետ չմնալ ու արձագանքե լկյանքում տեղի ունեցող փոփոխություններին, հետևաբար պետք է ՏՀՏ կիրառումը դպրոցում համարել դրական գործընթաց ու օգտվել դրանց ընձեռած բազմաթիվ հնարավորություններից՝ ուսուցման պրոցեսում սովորողների մոտիվացիան բարձրացնելու նպատակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Վ. Ս. Դյատլովա –Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կրթության ոլորտում

2.Գ.Գ.Պանինա -ՏՀՏ մեթոդները կրթության մեջ

3.Ուսուցման արդյունավետ հնարներ - Ս.Խաչատրյան Եր. Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան- 2020թ.

4.Կ.Բաղիրյան ,Ա.Առաքելյան - Ժամանակակից մեթոդների և ՏՀՏ գործիքների կիրառումը պատմության դասաժամերին՝ որպես դաս ի արդյունավետության բարձրացման միջոց- 2021թ.